ԵՀՀ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԱԶԳՈՒԹՅԱՄԲ ԵԶԴԻ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՏԴ 342.7:323.1
ԳՄԴ 67.400
Հ 247

Հետազոտությունն իրականացվել է Հայաստանում եզդի աղջիկների հանրային մասնակցության խթանմանն ուղղված նախագծի շրջանակում, որի նպատակն է ավելի խորը պատկերացում կազմել Հայաստանում բնակվող եզդի աղջիկների իրավունքներին և հնարավորություններին առնչվող խնդիրների վերաբերյալ:

Այս հրապարակումը պատրաստվել է Հայաստանում Բուլղարիայի Հանրապետության դեսպանության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Եվրասիա համագործակցություն հիմնադրամը և կարող է չարտահայտել Հայաստանում Բուլղարիայի Հանրապետության դեսպանության տեսակետները:

Հայաստանում բնակվող ազգությամբ եզդի աղջիկների իրավունքներին և հնարավորություններին առնչվող խնդիրները/ Իսաբել Բրոյան Մխաիլի, Փառանձեմ Փարյան, Հայաստան Մարտիրոսյան, Էվիյա Հովհաննիսյան

Խմբագիրներ՝
Նիկոլայ Հովհաննիսյան
Անահիտ Խաչատրյան
Ազնիվ Նասլյան

Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2020 թ., էջ 33

Սույն հոդվածների ժողովածուն մաս է կազմում «ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո հրապարակվող ձեռնարկների շարքի՝ Կրթություն, պատմության մեթոդաբանություն, մշակույթ և արժեքներ (ԿՊՄՄԱ) թեմայով: Շարքն ընդգրկում է զրույցներ չորս ծավալուն թեմաների վերաբերյալ.

- Քննադատական մտածողություն (ՔՄ)
- Պատերազմ և խաղաղություն (ՊԽ)
- Քաղաքացիական հասարակություն (ՔՀ)
- Կրթություն, պատմության մեթոդաբանություն, մշակույթ և արժեքներ (ԿՊՄՄԱ)

ՀՏԴ 342.7:323.1
ԳՄԴ 67.400

ISBN 978-9939-896-30-4
© Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2020

Բովանդակություն

Հետազոտական ենթատեքստը 4

Հետազոտության նպատակը, խնդիրները և մեթոդի ընտրությունը 5

Եզդիական կրոնը և համայնքի սոցիալական կառուցվածքը 6

Եզդի կնոջ դերը XIX դարի հասարակական կյանքում 7

Եզդի կնոջ դերը խորհրդային տարիների հասարակական կյանքում 9

Սոցիալական և կրթական խնդիրները հետխորհրդային Հայաստանի եզդիաբնակ համայնքներում 13

Ա. Բժշկական կենտրոնների հասանելիություն 14

Բ. Մանկապարտեզների հասանելիություն 14

Գ. Կրթական խնդիրներ 15

Դ. Աշխատատեղերի հասանելիություն 18

Վաղ ամուսնությունների խնդիրը եզդիական համայնքներում 19

Ա. Ամուսնական մշակույթի տարբերները. խառնամուսնություններ 20

Բ. Սեռերի քանակական անհամամասնության խնդիրը 21

Գ. ֆիզիկական և հոգեբանական անվտանգությունը. առևանգման վախը 22

Դ. Գենդերային նորմեր և պրակտիկաներ 23

Ամփոփում 25

Սոցիալական խնդիրների և կարիքների գնահատումը 25

ABSTRACT 28

Օգտագործված գրականության ցանկ 29

Հետազոտական ենթատեքստը

Այսօր, ցանկացած հասարակություն կամ էթնիկ հանրություն ուսումնասիրելիս և դրա նկատմամբ որևէ բնորոշում կամ ձևակերպում կիրառելիս, հետազոտողները նախ և առաջ փորձում են հասկանալ՝ որն է տվյալ հանրության ինքնությունը/ինքնաբնորոշումը (identity)։ Այսինքն՝ յուրաքանչյուր հանրության առաջ քաշած չափորոշիչների՝ լեզվի, կրոնական պատկանելության, ինքնանվանման, մշակութային առանձնահատկությունների հիման վրա հետազոտողները փորձում են հասկանալ այդ հանրության ժողովրդագրական տվյալները և սփռվածության աշխարհագրությունը։ Այս խնդիրը մեծապես առնչվում է հայաստանաբնակ քրդերին և եզդիներին, որոնց նույնացման և տարաբաժանման քաղաքական ու գիտական բանավեճերն ունեն տասնամյակների պատմություն։ Խորհրդային Միության (ԽՍՀՄ) տարիներին ազգագրության/ազգաբանության գերազանցապես պրիմորդիալիստական մոտեցման և ԽՍՀՄ-ի վարած ազգային փոքրամասնությունների նկատմամբ էթնոցենտրիկ քաղաքականության պայմաններում եզդիները դիտարկվում էին որպես քուրդ ժողովրդի կազմում կրոնական փոքրամասնություն[1]։ Երբ մուսուլման քրդերի մեծամասնությունը 1988 թ. սկսված ազգային անկախացման շարժման հետևանքով երկրում բնակվող մյուս մուսուլման բնակչության հետ լքեցին Հայաստանը, քաղաքական տարբեր հարթակներից սկսեցին հնչել եզդի ժողովրդի իրավունքների վերհանման և վերահիմաստավորման կոչեր[2]։

Մինչ օրս եզդիական բնակչության մասին հանրայնորեն առկա տեղեկատվությունը շատ հատվածական է, քանի որ պետականության բացակայության և հետևաբար ասիմիլյացիայի վտանգի պատճառով եզդիական համայնքը շարունակում է մնալ փակ։ Եզդիական կրոնի վերաբերյալ թյուր մեկնաբանությունների պատճառով (օրինակ՝ այն պատկերացումը, որ եզդիները սատանային են երկրպագում) այս հանրույթը ստիպված էր գոյատևել թշնամական միջավայրում, քանի որ պատմականորեն «եզդի լինել նշանակում էր պատկանել ճնշված փոքրամասնության թվին, որը պետք է թաքցներ իր կրոնական համոզմունքներն ու դրանցով պայմանավորված սովորույթները»[3]։

Եզդի հասարակության մեջ կանանց դերի վերաբերյալ պատմական երկխոսությունը հնարավոր դարձավ արևմտյան ճանապարհորդների և միսիոներների, ինչպես նաև խորհրդային հետազոտողների շնորհիվ, որոնք, նկատի առնելով ԽՍՀՄ-ի քաղաքականությունը, զուգահեռներ էին անցկացնում, թե ինչպես էին ապրում եզդիները Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից առաջ և հետո։ Չնայած եզդիները Խորհրդային Միության մարդահամարի վաղ փաստաթղթերում դիտարկվում էին որպես առանձին խումբ, 1930 թվականից սկսած նրանք

---

[1] Езиды//Народы мира: историко-этнографический справочник / Гл. ред. Ю. В. Бромлей. М.: Советская энциклопедия, 1988. С. 162

[2] Иванов М., Политика и общество: судьба советских курдов // Восток (Oriens), 2014, №6. С. 62

[3] Ackermann, A., "A Double Minority: Notes on the Emerging Yezidi Diaspora", In Diaspora, Identity and Religion: New Directions in Theory and Research, edited by W. Kokot, K. Tölölyan and C. Alfonso, 156–69. London: Routledge, 2004

հաշվառվեցին որպես քրդեր՝ հիմնվելով լեզվական նմանության վրա[4]: Ուստի ԽՍՀՄ պաշտոնական փաստաթղթերում եզդիները նշվեցին որպես քրդեր կամ եզդի քրդեր: ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի կառավարությունը սկսեց տարանջատել եզդիներին էթնիկ քրդերից:

Հետազոտության մեջ «եզդի» տերմինը կօգտագործվի այն հանրույթի համար, որն իրեն նույնականացնում է այդ կերպ և տարբերակում է մուսուլման քրդերից, իսկ խորհրդային ժամանակաշրջանի հետազոտողների հոդվածներից արված հղումներում այս երկու ժողովուրդների անվանումները կներկայացվեն նույնությամբ, ինչպես նշված է բնագրում:

Հետազոտության նպատակը, խնդիրները և մեթոդի ընտրությունը

Այս ուսումնասիրության հիմնական նպատակն է վերհանել հայաստանաբնակ եզդիական համայնքներում արդի սոցիալ-մշակութային այն երևույթները, որոնց պատճառով սահմանափակվում և ոտնահարվում են եզդի աղջիկների և կանանց իրավունքները:

Հետազոտության մեջ քննության են առնվել հետևյալ խնդիրները.

- Ինչպե՞ս է ընկալվում կնոջ դերը եզդիական հասարակության մեջ:
- Ինչպե՞ս են ազդում վաղ ամուսնությունները և անավարտ դպրոցական կրթությունը եզդի կանանց՝ հասարակական կյանքում ունեցած դերի վրա:
- Ինչպե՞ս են խախտվում եզդի աղջիկ երեխաների իրավունքները, և արդյո՞ք պետությունը ձեռնարկում է քայլեր՝ կանխարգելելու այդ խախտումները:

Ուսումնասիրությունն իրականացվել է 2019 թ. օգոստոս-նոյեմբեր ամիսներին Արմավիրի մարզի Ֆերիկ և Արագածոտնի մարզի Ալագյազ եզդիաբնակ համայնքներում: Հետազոտության էմպիրիկ փուլի ընթացքում նշված համայնքներում, ինչպես նաև Երևանում իրականացվել են դիտարկումներ, խորքային և փորձագիտական հարցազրույցներ ու ֆոկուս-խմբային քննարկումներ համայնքի ներկայացուցիչների, ոլորտի մասնագետների, մարդաբանների, ՀՀ Կառավարության ներկայացուցիչների, ինչպես նաև ոստիկանության անչափահասների գործերով բաժանմունքի աշխատակիցների հետ: Ընդհանուր առմամբ հետազոտության ընթացքում իրականացվել են 17 խորքային հարցազրույցներ, 4 ֆոկուս-խմբային քննարկումներ դպրոցահասակ տղաների ու աղջիկների հետ և 6 փորձագիտական հարցազրույցներ:

Բացի դաշտային հետազոտական աշխատանքներից՝ ուսումնասիրվել են նաև տվյալ թեմայի վերաբերյալ առկա համապատասխան մասնագիտական գրականությունը և մի շարք արխիվային

[4] United Nations High Commissioner for Refugees, Status Determination and Protection Information Section (DIPS). The Human Rights Situation of the Yezidi Minority in the Transcaucasus. https://www.refworld.org/pdfid/485fa2342.pdf. 2008. Accessed 15.11.2019. P. 9

փաստաթղթեր: Հետազոտական նյութի վերլուծության և համակարգման համար դուրս են բերվել հետևյալ ենթաթեմաները.

1. Եզդիական կրոնը և համայնքի սոցիալական կառուցվածքը:
2. Եզդի կնոջ դերը XIX դարի հասարակական կյանքում:
3. Եզդի կնոջ դերը խորհրդային տարիների հասարակական կյանքում:
4. Եզդիական/քրդական համայնքը հետխորհրդային առաջին տարիներին:
5. Սոցիալական և կրթական խնդիրները հետխորհրդային Հայաստանի եզդիաբնակ համայնքներում:
6. Վաղ ամուսնությունների խնդիրը եզդիական համայնքներում:
7. Սոցիալական խնդիրների և կարիքների գնահատումը:

Եզդիական կրոնը և համայնքի սոցիալական կառուցվածքը

Եզդիները էթնոկրոնական խումբ են, որի կրոնը եզդիականությունն է: Եզդիական դավանանքի յուրօրինակ բնութագրիչներից մեկն այն է, որ դրա հետևորդները բնորոշվում են «Եզդիխանա» (Ēzdīxāna) եզդիական համայնքի պատկանելիությամբ: Հենց այս հանգամանքը թույլ է տվել եզդիներին ձևավորվել որպես փակ էթնո-դավանաբանական խումբ, որի կարևորագույն բաղադրիչը հավատքն է: Համաձայն եզդիական կրոնի՝ յուրաքանչյուր եզդի պետք է առաջնորդվի կրոնական պատգամներով, որոնք ուղղված են կրոնի մաքրության պահպանմանը:

Եզդիականությունը պատմականորեն եղել է բանավոր կրոն, որի ավանդույթները սերնդեսերունդ փոխանցվում են կավլների՝ եզդիական սրբազան աղոթքների միջոցով:

Եզդիների կրոնը սերտորեն փոխկապակցված է կաստայական համակարգի հետ[5]: Ժառանգականության սկզբունքով բոլոր եզդիները պատկանում են երեք կաստաներից որևէ մեկին՝ շեյխեր (հոգևորական), փիրեր (հոգևորական) և մրիդներ (աշխարհիկ բնակչություն): Շեյխերն ու փիրերը մասնակցում են մրիդների կյանքի հիմնական ծեսերին՝ երեխայի ծնունդ, հարսանիք, թաղում: Շեյխի պարտականությունն է հետևել համայնքի անդամների՝ եզդիական կրոնի կանոնների պահպանմանը և այցելել իր համայնքի յուրաքանչյուր տուն: Փիրի պարտավորության մեջ են մտնում եզդիական կրոնական կանոնների մեկնաբանումն ու տարածումը ու մրիդների օծումը:

Եզդիականությունը, որպես կրոնական համակարգ, որը նաև սահմանում է եզդիական համայնքի սոցիալական համակարգը, հիմնվում է երեք առանցքային պատվիրանների վրա՝ «Դիզա դանե (dîza de'nê), Դարբա հիրկա (derba xerqe) և Շալբկե (կտոր) զերին (şelbikê zêrîn)»: Դրանցից առաջինը թարգմանաբար նշանակում է «ներկերի ման» (քրդ. dīzik - «ման», dan - «ներկ»), որը խորհրդանշում է միախառնումը, տվյալ դեպքում խառնամուսնությունները, և արգելում է եզդիների

[5] Авдоев, Теймураз. Историко-теософский Аспект Езидизма. Москва: Эра. 2011. С. 256.

ամուսնությունն այլադավանների հետ՝ «եզդին կարող է ծնվել միայն եզդի հորից և մորից»: «Դարբա հիրկա» բառացի նշանակում է «քուրձի ուժը» (նկատի է առնվում դերվիշի քուրձը, այսինքն՝ հոգևոր անձի ուժը): «Դարբա հիրկան» ապահովում է եզդիական համայնքի կաստայական մաքրությունը, հստակ սահմանում է միջկաստայական հարաբերություններն ու թույլատրելի կապերը կաստայի ներսում: Ընդ որում, սա վերաբերում է ինչպես առանձին կաստաների և մեկ կաստայի ներսում հոգևոր հարաբերություններին, այնպես էլ կաստաների ներսում ֆիզիկական կապերին: Երրորդ պատվիրանը՝ «Շալբկե զերին» (բառացի՝ «ոսկե գավաթ»), եզդի մարդու հավատքի հիմնական պատվիրանն է: Այն կոչ է անում հետևելու կրոնի պատվիրաններին, պահպանելու սովորույթները, հավատափոխ չլինելու: Վերոնշյալ պատվիրանները միասին կազմում են «Ֆարզե բրատիե»՝ «Հոգևոր դաստիարակության պատվիրանները», և որոշում են եզդիական համայնքի սոցիալական բնույթն ու կարգը: Այս պատվիրանների խախտումը համարվում է հավատուրացություն, և պատվիրանները խախտողին սպառնում է օտարում համայնքից[6]:

Եզդի կնոջ դերը XIX դարի հասարակական կյանքում

Դեռևս 19-րդ դարում մի շարք եվրոպացի ճանապարհորդներ, ովքեր այցելել էին Օսմանյան կայսրության արևելյան հատվածները, իրենց գրառումներում հիշատակում են եզդի կանանց: Այսպես, համաձայն ճանապարհորդ Ֆրեդերիկ Ֆորբսի գրառումների՝ «*եզդի կանայք, ի տարբերություն մուսուլման կանանց, չէին թաքցնում իրենց դեմքը: Նրանք ունեին գեղեցիկ կազմվածք, վարսեր, սև աչքեր և ուժեղ մկաններ… զբաղվում էին իրենց տնային գործերով, շփվում էին տղամարդկանց հետ, ինչպես եվրոպական երկրներում*»[7]: Եզդի կանայք հիմնականում զբաղվում էին տնայնագործությամբ ու անասնապահությամբ: Ֆորբսը նկատում է, որ եզդուհիները հատկապես ուշադրություն էին դարձնում տան մաքրությանը[8]:

Մեկ այլ ճանապարհորդ և դիվանագետ Լայարդը գրում է իր հուշերում, որ եզդուհիներն առանց ամաչելու ազատ շփվում էին իր հետ. «*Երբ ես նստած էի ծառերի շվաքում, աղջիկները ծիծաղում էին իմ շուրջը, ապա սկսեցին զննել հագուստս և հարցեր տալ այն բաների մասին, ինչն իրենց համար տարօրինակ էր: Նրանցից առավել համարձակները բերեցին ինձ իրենց հուլունքները (...), իսկ մյուսներն այդ ժամանակ (...) կանգնած էին որոշակի հեռավորության վրա և վայրի ծաղիկներ էին հյուսում իրենց մազերի մեջ*»[9]: Սակայն ըստ հետազոտող Իսյա Ժոզեֆի՝ «*եզդի կանայք ստիպված էին ծածկել իրենց երեսները շրջազգեստների փեշերով, երբ անծանոթ տղամարդիկ նայում էին իրենց*»[10]:

---

[6] Նույն տեղում՝ 285-86

[7] Forbes, Frederick. "A Visit to the Sinjár Hills in 1838, with Some Account of the Sect of Yezídís, and of Various Places in the Mesopotamian Desert, between the Rivers Tigris and Khábúr." Journal of the Royal Geographical Society of London, Vol. 9. P. 427

[8] Նույն տեղում, էջ 427

[9] Layard, Aysten Henry. Nineveh and Its Remains: With an Account of a Visit to the Chaldean Christians of Kurdistan, and the Yezidis, or Devil-worshippers; and an Enquiry into the Manners and Arts of the Ancient Assyrians. London: John Murray. 1849. P. 295.

[10] Joseph, Isya. Devil Worship: The Sacred Books and Traditions of The Yezidis. CreateSpace Independent Publishing Platform. 2016. P. 99

Հնարավոր է, որ սա կապված է եզդիների բնակության վայրերի կամ հատուկ ցեղային սովորույթների հետ:

Հատկանշական է, որ էմիրական[11] ընտանիքի կանայք պատմականորեն ձայնի իրավունք ունեին եզդիական համայնքների կառավարման գործում և որոշ դեպքերում նույնիսկ փաստացիորեն ղեկավարում էին այդ համայնքները: Այդպես, եզդիների ամենահայտնի կին առաջնորդը Մայան Խաթունն (1873/1874–1957/1958) է՝ էմիր Սայիդ բեյի (1900–1944) մայրը, Ալի Բեգայի (1912) կինը: Մայան Խաթունը փաստացիորեն ղեկավարում էր համայնքը և հարգված էր ոչ միայն եզդիների շրջանում, այլև համայնքից դուրս[12]:

Օսմանյան կայսրությունում երկար տարիներ եզդիներին արգելվում էր կրթություն ստանալ: Հայտնի չէ՝ այդ արգելքն ուղղված էր ընդհանուր կրթությա՞նը, թե՞ միայն դպրոցներին: Ըստ եզդի մի բանասացի՝ եզդիները չեն հաճախել իսլամական դպրոցներ, քանի որ այնտեղ նրանք ստիպված էին ուսումնասիրել իսլամական տեքստեր և Ղուրան, և ուծացման վտանգն այդպիսով ավելի մեծ կլիներ[13]: Հետևաբար եզդիները նախընտրում էին կրթություն ստանալ տանը կամ առհասարակ չէին ստանում:

Արժե արձանագրել եզդուհիների հատուկ դերը հակամարտությունների լուծման գործում: Օրինակ՝ Ամարիկե Սարդարն իր «Իմ նախնիների ուղին» գրքում պատմում է Օսմանյան կայսրության Չլքանի գյուղի բնակիչների, մասնավորապես եզդուհի Բելգայի մասին, որը ինքնուրույն վրեժ լուծեց իր եղբորը սպանած մարդուց[14]: Հատկանշական է, որ սպանության վրեժը կատարվել է ոչ թե ընտանիքի արական ներկայացուցչի, այլ կնոջ կողմից, և դրա համար նա արժանացել է ընտանիքի հարգանքին: Պատմությունը սկսվում է եզդիական «Առյուծն առյուծ է, լինի էգ թե որձ» ասույթով, և սա խոսում է այն մասին, որ եզդուհին ինչ-որ չափով հավասար էր տղամարդուն:

Սվետլանա Բայլոզն իր հոդվածում գրում է, որ երբ երկու ցեղեր կռվում էին ռազմի դաշտում, կինը կարող էր դուրս գալ և գլխաշորը տարածել նրանց միջև, և այդ ժամանակ նրանք անշուշտ կդադարեցնեին[15]: Համաձայն մեկ այլ սովորույթի՝ եթե կինը առանձնանում էր խելքով կամ գեղեցկությամբ, ապա որդին կրում էր մոր անունը: Տանը կինն ուներ նաև ձայնի իրավունք, և դստեր կամ որդու ամուսնության հարցում մոր համաձայնությունը առանձնահատուկ կարևորություն ուներ: Բայլոզը նաև նշում է, որ եզդիների պատմության մեջ եղել է Ադելա Խանումը, որը ամուսնուց հետո երկար ժամանակ ղեկավարել է ամբողջ շրջանը:

Սակայն այս ազատությունը հարաբերական էր: Երբեմն դա հատկանշվում էր կնոջ՝ տղամարդուց կախվածությամբ: Կինը տառապում էր հոգսերի ծանրության տակ: Նա ստիպված էր վարել տնային

[11] Եզդիների կրոնական և կրթական հարցերով առաջնորդը կրում է «միր»՝ «էմիր» տիտղոսը
[12] Guest, John S. Survival Among The Kurds: A History of the Yezidis. NY: Routledge. 2010. P. 191
[13] Allison, Christine. The Yezidi Oral Tradition in Iraqi Kurdistan. Richmond: Curzon Press. 2001. P. 47
[14] Serdar, Emerîkê. Wê şevê… Yêrêvan: VMV Print. 2013
[15] Байлоз, Светлана. “Курдская женщина вчера и сегодня”. Архив РА "Риа Таза", фонд 1407, список 27. 1970

գործերը, մասնակցել այլ աշխատանքների: Հատկապես ծանր էր երիտասարդ կնոջ վիճակը: Նա ստիպված էր արթնանալ բոլորից առաջ, մաքրել ամեն ինչ, ծառայել բոլորին, քնել բոլորից ուշ: Պատահում էր, որ կինը, որն արդեն թոռներ ուներ, չէր խոսում իր ավագ դուստրերի հետ և չէր ուտում տղամարդկանց հետ[16]:

Այդպիսով, ապրելով կրոնական և մշակութային այլ միջավայրում՝ եզդի կինն ավելի խոցելի էր դարձել երկրի հասարակական-քաղաքական կյանքին մասնակցության ոլորտում: Չնայած նրան, որ պատմությանը հայտնի են եզդուհիներ, որոնք ղեկավարում էին կլանները կամ հասարակական կյանքում հատուկ դիրք էին զբաղեցնում, այդ ազատությունը հարաբերական էր: Եվ դրա պատճառներից են ավանդական կյանքի ձևը և պատշաճ կրթության բացակայությունը:

Եզդի կնոջ դերը խորհրդային տարիների հասարակական կյանքում

Եզդիները ժամանակակից Հայաստանի տարածքում հայտնվել են 19-րդ դարի վերջին - 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունից բռնի տեղահանման արդյունքում: Հատկանշական է, որ Խորհրդային Միության կառավարությունը ազգային ինքնության նշան էր համարում լեզուն, այլ ոչ թե կրոնը[17]: Այդ իսկ պատճառով «եզդի» բառն անհետացել է բազմաթիվ պաշտոնական աղբյուրներից և փաստաթղթերից: Թեև եզդիների մասին հիշատակվում է որպես առանձին էթնիկ խումբ վաղ խորհրդային ժողովրդագրական փաստաթղթերում, սակայն 1930-ականներից ի վեր նրանք ներկայացվում են որպես մեկ միասնական քուրդ ազգություն[18]:

Համաձայն ազգագրագետ Չուրսինի[19]՝ մինչև խորհրդային իշխանության հաստատումը հայաստանաբնակ քրդերի շրջանում ընդունված էին վաղ ամուսնությունները. տղամարդիկ ամուսնանում էին 15-16 տարեկանում, իսկ կանայք՝ 12-13: Ընդ որում, սրանք էնդոգամ ամուսնություններ էին, այսինքն՝ ամուսնացողները հաճախ արյունակից բարեկամներ էին:

Խորհրդային իշխանության հաստատումից հետո Հարավային Կովկասի երկրներում սկսվեցին արմատական փոփոխություններ տեղի ունենալ քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում: Նոր մեխանիզմներ էին անհրաժեշտ հասարակական-քաղաքական համակարգին ինտեգրվելու և հարմարվելու համար: Եզդիական համայնքի առանձնահատուկ փակ կառուցվածքը և բարձր կրոնականությունը բարդացնում էին նոր համակարգին ինտեգրվելու գործընթացը: Այսպես, ազգագրագետ Տատյանա Արիստովան նշում է, որ եզդիական ավանդական

---

[16] Նույն տեղում

[17] United Nations High Commissioner for Refugees, Status Determination and Protection Information Section (DIPS). The Human Rights Situation of the Yezidi Minority in the Transcaucasus. https://www.refworld.org/pdfid/485fa2342.pdf. 2008. Accessed 15.11.2019. P. 9

[18] United Nations High Commissioner for Refugees, Status Determination and Protection Information Section (DIPS). The Human Rights Situation of the Yezidi Minority in the Transcaucasus. https://www.refworld.org/pdfid/485fa2342.pdf. 2008. Accessed 15.11.2019

[19] Чурсин Г. Ф., Филиппович Л. А. География Закавказья. Тифлис, 1929

կրոնական փառատոները մեծ վնաս են հասցնում համայնքում խորհրդային ինքնության ձևավորմանը, և որ եզդի երիտասարդ կանայք հաճախ մասնակցում են դրանց: «Ռյա թազա» թերթի իր հոդվածում Արիստովան առաջարկում է պայքարել կրոնական մնացուկների դեմ՝ նշելով, որ «*նման պայքարը պետք է արտահայտվի մեծածավալ ոչ բռնի բացատրական աշխատանքով*»[20]: Նրա կարծիքով աթեիստական քարոզչությունը պետք է իրականացվի այնպես, որ հավատացյալները չշեղվեն ԽՍՀՄ գաղափարախոսությունից:

Հատկանշական է, որ 1923 թվականից ի վեր, Վրաստանում հրատարակվող «Զարյա Վոստոկա» թերթի տեղեկատվության համաձայն, հարավկովկասյան տարածաշրջանում գումարվել են եզդիական/քրդական մտավորականության բազմաթիվ գիտաժողովներ և համագումարներ, որտեղ քննարկվել են հասարակական կյանքի, ընտանիքի, ամուսնության, գլխագնի և արյան վրեժի հարցերը[21]: Օրինակ՝ 1926 թ. Թալինի տարածաշրջանում անցկացվեց քրդական համաժողով 28 պատվիրակների մասնակցությամբ, որոնցից 6-ը եզդիներ էին[22]:

Այսպիսով՝ անգրագիտության և ցեղային հարաբերությունների մնացորդների վերացումը դարձավ խորհրդային ղեկավարության գլխավոր խնդիրներից մեկը: Օրինակ՝ ըստ «Ռյա թազա» թերթի՝ 1931–1932 թթ. (1932, հուլիսի 5, 1933, հունվարի 6) ուսումնական տարում Թալինի շրջանի 606 սովորողներից 228-ն արդեն եզդուհիներ/քրդուհիներ էին, Ապարանի շրջանի 12 քրդական/եզդիական դպրոցներում 538 դպրոցականից 245-ն աղջիկ էր:

Ամբողջ երկրով մեկ մեծահասակների շրջանում անգրագիտության վերացման կենտրոններ բացվեցին: Ըստ «Ռյա թազա» թերթի՝ գրագիտության տարածման կենտրոններ գործել են գրեթե բոլոր եզդիական/քրդական գյուղերում. *«Գրագիտություն ստանալու համար 142 կին գալիս է Ապարանի Մեծ Ջաջուշլու (այժմ՝ Ալագյազ), Միրաք, Ջարջարիս, Կարսանսար գյուղերից: (...) 1933 թ. Թալինի շրջանի Գյալտո գյուղում կոմսոմոլի անդամները գրագիտություն էին սովորեցնում 43 կնոջ ու 40 տղամարդու: (...) Աշտարակի շրջանի Շամիրամ գյուղում 52 հոգի կրթություն ստացան»*[23]:

1930-ական թվականներին Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար Աղասի Խանջյանը ուղղակիորեն ներգրավված էր եզդիների/քրդերի կրթության աջակցման գործում: 1931 թ. Երևանում բացվեց գիշերօթիկ քրդական մանկավարժական ուսումնարան, որը կարևոր նշանակություն ունեցավ եզդի (քուրդ) ուսուցիչների վերապատրաստման գործում: Մի քանի տարի անց Երևանում մեկնարկեցին եզդի/քուրդ ուսուցչուհիների վերապատրաստման երկամյա դասընթացներ[24]:

---

[20] Аристова, Т. Ф. "К вопросу о религиозных пережитках в курдских семьях". Архив РА "Риа Таза", фонд 1407, список 27, 1961
[21] Заря Востока. No 1048. 1926
[22] Նույն տեղում
[23] Риа Таза. 22 апреля. 5 июля. 19 июля. 1932
[24] Риа Таза. 12 ноября. 1937

ԽՍՀՄ տարիներին Հայաստանում մեծ ուշադրություն է դարձվել եզդիների/քրդերի սոցիալ-մշակութային կյանքի ակտիվացմանը: 1926 թ. նկարահանվեց եզդիների կյանքի մասին պատմող «Զարե» ֆիլմը: Ֆիլմի ռեժիսորը հայազգի մշակութային գործիչ Համո Բեկնազարյանն էր: Ավելի ուշ ստեղծվեց քրդական ժողովրդական շրջիկ թատրոնը, որը նոր շունչ հաղորդեց եզդիական համայնքներին: Թատրոնի աշխատանքներում մեծապես ներգրավված էին նաև եզդի կանայք: Ուշագրավ է, որ թատրոնը հյուրախաղերով շրջել է ողջ ԽՍՀՄ-ով:

ԽՍՀՄ-ի քաղաքականությունը նպաստեց եզդի կնոջ մասնակի էմանսիպացիային: Եզդուհիներին հնարավորություն ընձեռվեց տղամարդկանց հետ հավասարապես կրթություն ստանալու և մասնակցելու տեղական ավագանիների աշխատանքներին: Դեռևս 1960-ական թվականներից Հայաստանում գործում էր քրդական երիտասարդական կազմակերպություն, որը հորդորում էր եզդի/քուրդ կանանց ակտիվորեն մասնակցել Խորհրդային Հայաստանի հասարակական և քաղաքական կյանքին[25]: *«Եթե նախկինում քուրդ կինը իրավունք չուներ քվեարկելու, ապա հիմա համարձակորեն դուրս է գալիս բեմահարթակ և ասում իր խոսքը: Մենք ունենք դպրոցներ, գրադարաններ, եզդիական պարերի խմբակներ: Մեզանից շատերը ստանում են միջնակարգ և բարձրագույն կրթություն, ինչը նախկինում անհասանելի էր քրդերի համար»,*– ասվում է հայտարարության մեջ:

1970 թ. «Ռյա թազա» թերթում լույս է տեսնում Սվետլանա Բայլոզի «Քուրդ կինը երեկ և այսօր» հոդվածը: Հոդվածում նշվում է, որ նախկինում քուրդ կինը ստիպված էր ղեկավարել տունը, մասնակցել տնային գործերին: Սակայն հեղինակը կարևորում է քրդուհիների՝ երկրի հասարակական կյանքում ունեցած ակտիվ մասնակցությունը. *«Այսպիսով, Ապարանի շրջանի Ջամուշավան գյուղից Մարա Ալին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր է, Ատլաս Սուլեյմանովան Շարշարիսա և Քուրուբոհազա գյուղերի միացյալ ներկայացուցիչն է գյուղխորհրդում»:* Վերջում Բայլոզը ընդգծում է, որ Խորհրդային Միությունում քուրդ կանայք ստանում են մանկավարժական, բժշկական, ինժեներական և այլ մասնագիտական կրթություն, ինչը խիստ կարևոր է նրանց հասարակական կյանքում ունեցած մասնակցության համար:

Այսպիսով՝ ԽՍՀՄ քաղաքականությունը, որի նպատակն էր վերացնել ավանդական կենսաձևը, մեծապես նպաստեց նրան, որ եզդուհիները սկսեցին կրթություն ստանալ և մասնակցել երկրի հասարակական-քաղաքական կյանքին:

Եզդիական/քրդական համայնքը հետխորհրդային առաջին տարիներին

Հայաստանի եզդիների/քրդերի համար խորհրդային շրջանը շրջադարձային դեր ունեցավ՝ նրանց պատմության և մշակույթի ուսումնասիրության, ինչպես նաև ինքնության՝ լեզվի, կրոնի և մշակույթի պահպանման առումներով: Եզդիական/քրդական փոքրամասնությունը Խորհրդային Հայաստանում ամենամեծ ազգային փոքրամասնությունն էր: Համաձայն 1926 թ. Մարդահամարի՝ Հայաստանի

[25] Քրդական երիտասարդական կազմակերպության հայտարարությունը՝ ուղղված քուրդ կանանց 1960 թ.

բնակչության 1,7 %-ը (15 262 մարդ) կազմում էին եզդիները/քրդերը, իսկ արդեն 1989 թ. նրանց թիվը հասավ 56 127-ի[26]:

1988 թ. վերակառուցման և ազգային ու կրոնական ինքնության վերագնահատման գործընթացին զուգահեռ Հայաստանում եզդիական մեծ շարժում սկսվեց՝ եզդիական համայնքի ներկայացուցիչներ Ազիզ Ամարի, Քյարամ Սլոնի, Մահմուդ Թամոյանի և Հասան Հասանյանի գլխավորությամբ: Նրանց նպատակն էր, որ կառավարությունը պաշտոնապես ճանաչի եզդիներին որպես առանձին համայնք քրդերից[27]: Արդյունքում, 1989 թ. սեպտեմբերի 30-ին կայացած եզդիական ասամբլեայում եզդիները 1989 թ. ԽՍՀՄ մարդահամարի ժամանակ արձանագրվեցին որպես առանձին փոքրամասնություն:

Այդպիսով, քրդերի 80 %-ը, որոնք նախկինում իրենց քուրդ էին անվանում, հանդես եկան եզդիական ինքնությամբ՝ նպատակ ունենալով տարանջատվելու մուսուլման քրդերից: Իրենց ազգային և կրոնական ինքնությունը վերականգնելու համար եզդիական համայնքի առաջնորդները Շեյխ Հասանի նախաձեռնությամբ 1990 թ. Երևանում հիմնեցին առաջին եզդիական դպրոցը, իսկ 1991 թ. հրատարակվեց առանձին երկշաբաթյա թերթը՝ «Եզդիների ձայնը» (Dinge Yezdi), «Եզդիների հոգևոր խորհուրդ»-ը գրանցվեց կրոնական գործերի հանձնաժողովում, որը գտնվում էր ՀՀ Նախարարների խորհրդի ենթակայության տակ[28]: Մյուս կողմից, քրդերը սկսեցին թողարկել «Զագրոս»-ը՝ որպես Հայաստանում «Քրդերի ազգային խորհրդի» պաշտոնաթերթ: Ե՛վ «Զագրոս»-ը, և՛ «Ռյա թազան» դեռ գործում են շնորհիվ համայնքի և ՀՀ Կառավարության աջակցության:

Ինչ վերաբերում է մուսուլման քրդերին, ապա Հայաստանում 1988 թ. շարժումներից ի վեր քրդերի և հայերի միջև եղած բարիդրացիական հարաբերությունները սկսեցին լարվել: Ավելի քան 15 000 մուսուլման քրդեր, որոնց մի մասն ամուսնացել էր հայաստանաբնակ ադրբեջանցիների հետ, լքեցին Հայաստանը ԼՂՀ հակամարտության թեժացմանը զուգահեռ[29]:

Հետխորհրդային շրջանում եզդի և քուրդ համայնքների գաղափարական տարանջատման լավագույն ապացույցը 2007 թ. օգոստոսին Երևանում տեղի ունեցած երկու զուգահեռ ակցիաներն էին. այդպես, մարդիկ, ովքեր իրենց անվանում էին եզդիներ, կազմակերպել էին բազմամարդ ցույց Հանրապետության հրապարակում՝ բողոքելով Հյուսիսային Իրաքում մահմեդական քրդերի կողմից իրենց հավատակիցների՝ եզդի քրդերի նկատմամբ իրականացված բռնությունների և սպանությունների դեմ: Միևնույն ժամանակ, իրենց ազգությամբ քուրդ համարող Հայաստանի մի շարք քաղաքացիներ հավաքվել էին ոչ շատ հեռու՝ Շահումյանի հրապարակում, ի պաշտպանություն Իրաքի մահմեդական քրդերի՝ բողոքելով ընդդեմ Թուրքիայի ռազմական ագրեսիայի: Նրանք, ովքեր իրենց քուրդ էին անվանում, այս ճանապարհով ձգտում էին միանալ Թուրքիայի և Իրաքի «քրդական ազգային շարժմանը»՝ մեկնաբանելով նման դիրքորոշումը

[26] Evoyan L., Manukyan T., Religion as a Factor in Kurdish Identity Discourse in Armenia and Turkey, Religion and Soft Power in the South Caucasus, 2017, p. 157
[27] Abrahamian, J., The Yezidi Movement in Armenia, 1992, http://groong.usc.edu/orig/ja-19980702.html
[28] Asatryan G., Arakelova V., The Ethnic Minorities of Armenia, 2002, p. 12
[29] Abrahamian, J., Նույն տեղում. http://groong.usc.edu/orig/ja-19980702.html

սեփական պետություն ունենալու տեսլականով[30]: Այս օրինակը լավագույնս ցույց է տալիս, որ հետխորհրդային շրջանում «էթնիկ պատկանելիության ընտրությունը» եզդի-քրդերի հայաստանյան համայնքում մեծապես պայմանավորված է քաղաքական հայացքներով, համակրանքներով և դրսից ներթափանցած ազդեցություններով: Վերոնշյալ միտումները մեծապես ազդեցին եզդի-քրդական համայնքում սոցիալ-տնտեսական պատկերի փոփոխության վրա:

Սոցիալական և կրթական խնդիրները հետխորհրդային Հայաստանի եզդիաբնակ համայնքներում

Եզդիական համայնքը Հայաստանում ամենամեծ էթնո-կրոնական փոքրամասնությունն է: Եզդիները հիմնականում բնակվում են Արմավիրի, Արագածոտնի, Արարատի, Կոտայքի, Շիրակի և Լոռվա մարզերում՝ ընդհանուր շուրջ 35 000-40 000 եզդի բնակչությամբ[31]:
Սույնով ներկայացվում են Արմավիրի մարզի Ֆերիկ[32] և Արագածոտնի մարզի Ալագյազ[33] եզդիաբնակ համայնքներում իրականացված հետազոտության արդյունքները, որոնք ընդհանուր առմամբ արտահայտում են Հայաստանի եզդիական ամբողջ համայքի ներկայիս խնդիրները:

Ելնելով վերոնշյալ պատմական և ներկայիս սոցիալ-մշակութային նկարագրից՝ Հայաստանի եզդիական համայնքում առկա խնդիրները դիտարկվել են տարբեր հարթություններում՝ գենդերային, իրավական, սոցիալական և մշակութային:

Եզդուհիների սոցիալական կարիքները հասկանալու համար վերլուծությունն իրականացվել է ըստ հետևյալ ենթակետերի.

- բժշկական կենտրոնների հասանելիությունը,
- մանկապարտեզների հասանելիությունը,
- կրթական խնդիրները,
- աշխատատեղերի հասանելիությունը:

---

[30] Далалян Т., Идентификационные Процессы Среди Курманджиязычного Населения Армении, Фонд имени Генриха Белля, Тбилиси, 2008, URL: https://ge.boell.org/index.php/en/2008/09/10/identifikacionnye-processy-sredi-kurmandzhiyazychnogo-naseleniya-armenii

[31] ՀՀ վիճակագրական կոմիտե, 2011 թ. մարդահամարի արդյունքներ, https://www.armstat.am/file/doc/99478358.pdf

[32] Եզդիաբնակ համայնք Արմավիրի մարզում, բնակչությունը՝ 441, Արմավիրի մարզպետարանի պաշտոնական կայք, http://armavir.mtad.am/community-leader-council/261/

[33] Ալագյազ խոշորացված համայնքն ընդգրկում է Ալագյազ, Կանիաշիր, Ճարճակիս, Միջնատուն, Միրաք, Շենկանի, Ջամշլու, Ռյա թազա, Սադունց, Սիփան բնակավայրերը, բնակչությունը՝ 5828, Արագածոտնի մարզպետարանի պաշտոնական կայք, http://aragatsotn.mtad.am/about-communities/806/

Ա. Բժշկական կենտրոնների հասանելիություն

1988 թվականի երկրաշարժը ոչնչացրեց Ալագյազ գյուղի ողջ ենթակառուցվածքը: Փլվել են մանկապարտեզը, դպրոցը, գործարանը, պոլիկլինիկան: ԽՍՀՄ փլուզումից հետո Ալագյազում գոյություն ունեցող գործարանը դադարեց գործելուց, և բնակիչները, ներառյալ կանայք, կորցրին իրենց աշխատանքը: Հայաստանի անկախացումից հետո վերականգնվեց միայն դպրոցի շենքը:

Ներկայումս ինչպես Հայաստանի մի շարք համայնքներում, այնպես էլ Ֆերիկում և Ալագյազում բժշկական հաստատություններ առհասարակ չկան: Ֆերիկ համայնքի դպրոցում գործում է առաջին բուժօգնություն իրականացնող բուժկետ, սակայն բուժաշխատողը սպասարկում է մի քանի գյուղեր և միշտ չէ, որ տեղում է: Ըստ դպրոցի տնօրենի՝ բուժքույրը բնակվում է հարևան գյուղում, և պատահարի դեպքում զանգահարում, կանչում են նրան: Այնուամենայնիվ, համայնքի բնակիչները նշում են, որ առողջական ցանկացած խնդրի դեպքում իրենք նախընտրում են բուժզննում անցնել Էջմիածնի բժշկական կենտրոններում:

Նույն իրավիճակն է նաև Ալագյազ համայնքում. առողջական խնդրի պարագայում համայնքի բնակիչները ստիպված են գնալ հարևան գյուղ, Ապարան կամ Երևան:

Բ. Մանկապարտեզների հասանելիություն

Վերոնշյալ երկու համայնքներում չկան մանկապարտեզներ, ինչը մեծապես բարդացնում է կանանց հնարավոր զբաղվածության հարցը: Հարցազրույցներից մեկի ընթացքում ֆերիկցի կանանցից մեկը դժգոհություն հայտնեց, որ չի կարող աշխատել դաշտում, քանի որ երեխային խնամող չկա: Մանկապարտեզը հարևան գյուղում է, իսկ միջհամայնքային տրանսպորտի վատ աշխատանքի և ժամատախտակի անհամապատասխանելիության պատճառով հնարավորություն չունի իր երեխային ուղարկելու այնտեղ: Ինչ վերաբերում է Ալագյազ համայնքին, ապա այստեղ առկա է մեկ այլ խնդիր ևս: Ծնողներից մեկն իր խոսքում նշեց. *«Իմ երեխաները հաճախել են մանկապարտեզ, որը գտնվում է հարևան գյուղում, բայց այդ մանկապարտեզը քրիստոնեական է և ամեն կերպ փորձում է երեխաների մեջ սերմանել քրիստոնեական հավատը՝ քրիստոնեական միջոցառումների ու տոների միջոցով, իսկ մեր կրոնական դավանանքն այլ է: Այնուամենայնիվ, այնտեղ երեխաներս մասնակցում էին տարբեր միջոցառումների և սովորում հայերեն բանաստեղծություններ ...»* (Դաշտային ազգագրական նյութեր (հետայսու՝ ԴԱՆ), գ. Ալագյազ, տնային տնտեսուհի, մոտ 40 տարեկան)*:*

Նախադպրոցական կրթական հաստատությունների բացակայությունը եզդիական համայնքներում մեծ խնդիր է, քանի որ այն եզդի երեխաները, ովքեր չեն հաճախում մանկապարտեզներ, արդեն առաջին դասարանում բախվում են հայերենի չիմացության խնդրին: Այն հանգամանքը, որ երեխաները ընտանիքներում հաղորդակցվում են եզդիերեն/քրդերենով և չեն տիրապետում հայերենին, խոչընդոտում է հայերենով լիարժեք կրթություն ստանալու հնարավորությունը:

Գ. Կրթական խնդիրներ

Եզդիական համայնքում առկա են մի շարք խնդիրներ, որոնցից առաջնային նշանակություն ունի կրթական խնդիրը: Հայաստանում 12-ամյա միջնակարգ կրթությունը պարտադիր է, երեխան հիմնական՝ 9-րդ դասարանն ավարտելուց հետո պետք է ընդունվի ավագ 10-12-րդ դասարաններ կամ ուսումը շարունակի ուսումնարանում: Սակայն եզդիական համայնքում պատկերն այլ է:

Ֆերիկ համայնքում երեխաներն այսօր բախվում են այնպիսի կրթական խնդիրների, ինչպիսիք են թերի միջնակարգ կրթությունը (9-րդ դասարանից հետո ուսումը կիսատ թողնելը) և դրա պատճառով հետագայում բարձրագույն կրթություն ստանալու ձգտման գրեթե լիարժեք բացակայությունը: Ավելին,՝Ֆերիկ համայնքի դպրոցում աշակերտների սակավաթիվ լինելու պատճառով դասարանները համակազմ են, ինչն էլ ավելի է բարդացնում ուսուցման գործընթացը, քանի որ մեկ դասաժամի ընթացքում ուսուցիչը առաջին և երկրորդ համակազմ դասարանների աշակերտներին մատուցում է տարբեր դասագրքային նյութեր: Այս հանգամանքը մեծապես խոչընդոտում է երեխաների կրթական ծրագրերում լիարժեք ներգրավվածությունը՝ երեխաները կորցնում են հետաքրքրությունը ուսման գործընթացի նկատմամբ:

Ֆերիկ համայնքի դպրոցում այսօր սովորում է 46 աշակերտ, որոնցից 28-ը տղաներ են: Դպրոցի 8-9-րդ դասարաններում սովորող աշակերտների հետ ֆոկուս-խմբային քննարկման արդյունքում պարզ դարձավ, որ երեխաները կարևորում են կրթության շարունակականությունը, և նրանցից ոմանք արդեն մասնագիտական նախապատվություններ ունեն: Սակայն 9-րդ դասարանից հետո կրթությունը շարունակելու համար երեխաները բախվում են մի շարք խնդիրների, այն է.

- Ֆերիկի դպրոցը հիմնական է. Կրթությունն ավագ դպրոցում շարունակելու համար եզդի երեխաները ստիպված են գնալ հարևան Արշալույս կամ Հայթաղ համայնքների հայկական դպրոցները:

- Տրանսպորտային խնդիր. Ֆերիկի ավտոբուսի ժամային գրաֆիկը հարմարեցված չէ ավագ դպրոց հաճախող երեխաների ժամային գրաֆիկին, ինչի պատճառով դժվարանում է հարևան գյուղեր դասի գնալը:

- Բուհ ընդունվելու նպատակով դպրոցի ավարտական դասարանում առաջ է գալիս միասնական քննությունները բարեհաջող հանձնելու խնդիրը, որի համար աշակերտների մի մասը հաճախում է արտաուսումնական մասնավոր դասընթացների: Քանի որ Ֆերիկ համայնքի ուսուցիչների մեծ մասը չի բնակվում նույն համայնքում, այն աշակերտները, որոնք հաճախում են նմանատիպ դասընթացների, ստիպված պետք է մեկնեն քաղաք (հիմնականում Էջմիածին) կամ հարևան գյուղեր:

- Աղջիկներին փախցնելու բավականին կենսունակ պրակտիկան. Ֆերիկ համայնքում դեռևս առկա է դպրոցահասակ աղջիկներին տնից-դպրոց ճանապարհին առևանգելու խնդիրը:

Չնայած աշակերտների ցանկությունը մեծ է շարունակել կրթությունը ուսումնարաններում և բուհերում, սակայն գյուղում աշխատատեղերի բացակայության խնդիրը մեծապես ազդում է երեխաների ուսումը շարունակելու մոտիվացիայի վրա: Ներկա պահին համայնքում չկան անգամ արտադպրոցական խմբակներ: Նախորդ տարիներին հարևան Հայթաղ համայնքում գործել են սպորտային և կերպարվեստի խմբակներ, որոնք որոշ չափով խթանել են աշակերտների մեջ ուսման նկատմամբ ձգտումը: Խմբակների բարենպաստ ազդեցության մասին են վկայում երեխաների ծնողները, որոնք պատմում են, որ համայնքի դպրոցում որոշ ժամանակ դասավանդել է մի կին, որն իր ուրույն մոտեցմամբ կարողացել է խթանել հետաքրքրվածությունը և ակտիվ մշակութային կյանքը դպրոցահասակ երեխաների շրջանում, սակայն նրա մեկնումից հետո այդ ամենը կրկին «հանգել» է: Ֆերիկի դպրոցը նույնիսկ ֆիզիկական դաստիարակության համար պատշաճ դահլիճ չունի: Միակ վայրը, որտեղ երեխաները կարող են խաղալ, փոքրիկ ֆուտբոլային խաղադաշտն է, որը գտնվում է անմիջապես դպրոցի հարևանությամբ:

Հակառակ աշակերտների պնդումներին, որ եթե գյուղում բացվի ավագ դպրոց, ապա իրենք անպայման կշարունակեն ուսումը, գյուղի դպրոցի տնօրենի համոզմամբ, երեխաները սեր չունեն դեպի ուսումը. «*Ուսումը շարունակել ցանկացողը, հաղթահարելով վերոնշյալ խնդիրները, անպայման կշարունակի իր ուսումը, միայն թե իսկապես ներքուստ ցանկություն լինի*»,– պնդում էր Լ. Պ.-ն (ԴԱՆ, գ. Ֆերիկ, Լ.Պ., դպրոցի տնօրեն): Այս խնդիրը ավելի է խորանում ծնողների անհետևողական վերաբերմունքի պատճառով, որոնց մի մասը պնդում էր. *«Եթե ես երեխաների հետ պարապեմ, բա դաշտի գործն ո՞վ անի: Հազիվ հասցնում եմ գյուղի գործերն անել, կրթելը ուսուցիչների պարտականությունն է»* (ԴԱՆ, գ. Ֆերիկ, Չ., տնային տնտեսուհի, մոտ 35 տարեկան):

Կրթության խնդրի հետ կապված՝ Ֆերիկում սուր անհամաձայնություն գոյություն ունի տարբեր ընտանիքների, ծնողների և դպրոցի ուսուցչական անձնակազմի միջև, ընդհուպ մինչև այն, որ 2018 թ. դպրոցի տնօրենից դժգոհ ծնողների մի մասը բողոքի ցույց էր կազմակերպել դպրոցի բակում (Բալասանյան, 2018): Համայնքի մի շարք մտահոգ եզդի կանայք ուսումնական տարվա առաջին օրերին իրենց բողոքի ձայնը բարձրացրին՝ դպրոցում կրթության որակը բարձրացնելու նպատակով: Սակայն այդ կանայք բախվեցին սուր կշտամբանքի և անպատվող վերաբերմունքի գյուղի բնակիչ որոշ կանանց և տղամարդկանց, դպրոցի ուսուցչակազմի և անգամ իրենց հարազատների կողմից: Իրենց հասցեին մեղադրանքներ հնչեցին առ այն, որ այդ բողոքի ձայնը հովանավորվում է որոշ քաղաքական նպատակներ հետապնդող անձանց կողմից, ովքեր փորձում են խժդժություններ առաջացնել համայնքում: Ուշագրավ է, որ կանանց ակտիվ մասնակցությունը նման բողոքի ակցիային համայնքի այլ կանանց կողմից պիտակավորվեց որպես *«ամոթալի վարք և անբարո գործողություն»* (ԴԱՆ, գ. Ֆերիկ, Մ., ծնող), այն պարագայում, որ տղամարդիկ առհասարակ մասնակցություն չունեցան այս ակցիային: Այստեղ պետք է փաստել այն հանգամանքը, որ համայնքում կրթական խնդիրների լուծման համար պայքարող կանայք մինչև ամուսնությունը բնակվել և սովորել են հայկական միջավայրում, ստացել են լիարժեք միջնակարգ կրթություն և կարևորում են իրենց երեխաների որակյալ կրթությունը Ֆերիկ համայնքում:

Այլ է իրավիճակը Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում: Ալագյազը հայտնի է որպես քրդական մտավորականության կենտրոն, որը տվել է բազմաթիվ գիտնականներ և ակադեմիկոսներ, ինչը փաստեցին համայնքի գրեթե բոլոր բնակիչները: Ալագյազի տասներկուամյա միջնակարգ դպրոցում այս պահին սովորում է 96 աշակերտ: Լինելով շրջանում միակ միջնակարգ դպրոցը, որն ապահովում է 12-ամյա կրթություն, Ալագյազի դպրոց է հաճախում հարակից համայնքների եզդի երեխաների մեծ մասը:

Քանի որ խորհրդային տարիներին գյուղը եզդիների/քրդերի սոցիալ-մշակութային կենտրոնն է եղել և գտնվել է բանուկ միջպետական ճանապարհի վրա, այստեղ վերաբերմունքը ուսման, աշխատանքի, կանանց և տղամարդկանց սոցիալական դերերի նկատմամբ զգալի տարբերվում է Ֆերիկ համայնքից:

Ալագյազի համայնքապետ Ջ. Մ.-ն հարցազրույցի ժամանակ նշեց, որ վերջին տարիներին Ալագյազի դպրոցում իրականացվում են մի քանի միջոցառումներ, որոնք էլ ավելի են նպաստում աշակերտների ձգտմանը դեպի ուսումը: *«Դպրոցում անցկացվում է ամենամյա «Տարվա լավագույն ուսուցիչ և աշակերտ» ծրագիրը, որի հաղթողները ստանում են պարգևավճարներ ուսման առաջադիմության և ուսուցչական գործը բարեխիղճ կատարելու համար»* (ԴԱՆ, գ. Ալագյազ, Ջ. Մ., համայնքապետ):

Ինչ վերաբերում է կրթական մակարդակի բարձրացմանը, Ալագյազի դպրոցի տնօրենը նշում է, որ նախորդ տարիներին, երբ 12-ամյա կրթությունը պարտադիր չէր, կային աշակերտներ, որոնք 9-րդ դասարանից հետո թողնում էին ուսումը կամ ամուսնության, կամ ուղղակի սովորելու ցանկություն չունենալու պատճառով: *«Ներկայումս Ալագյազում պետք է նշել, որ գոնե 12-ամյա կրթությանը մեծ տեղ է հատկացվում: Սրա հետ մեկտեղ փաստենք, որ եզդի աշակերտներից շատ քչերն են, որ իրենց ուսումը շարունակում են բուհերում. տղաները դպրոցն ավարտելուն պես մեկնում են ծառայության, իսկ աղջիկները կամ ամուսնանում են, կամ որոշ հանգամանքներից ելնելով ուղղակի չեն շարունակում ուսումը»* (ԴԱՆ, գ. Ալագյազ, Ռ. Մ., դպրոցի տնօրեն):

Ալագյազում, ինչպես Ֆերիկ համայնքում արտադպրոցական խմբակների բացակայությունը ևս զգալի ազդեցություն է թողնում աշակերտների կրթական զարգացվածության վրա: Չունենալով այլ զբաղմունք՝ երեխաների օրը սկսվում և ավարտվում է միայն դասով ու տնային գործերով: Գյուղում գործում է միայն կարատեի խմբակ, որին հաճախում են միայն գյուղի տղաները: Ֆոկուս-խմբային քննարկման ընթացքում աղջիկները ցանկություն հայտնեցին, որ Ալագյազում գործեն նաև պարի, երգի և նկարչության խմբակներ՝ համայնքի երեխաների շրջանում նոր շունչ հաղորդելու համար: Աղջիկները խոսեցին նաև մասնագիտական կողմնորոշման ոչ ֆորմալ դասընթացների կարևորության մասին, որոնք հետագայում թույլ կտան ավելի հեշտ կողմնորոշվել մասնագիտության ընտրության հարցում: Դպրոցի 11-րդ և 12-րդ դասարանի աշակերտները մեծ ոգևորությամբ էին խոսում դպրոցն ավարտելուն պես համալսարան ընդունվելու և մասնագիտություն ձեռք բերելու մասին: Ալագյազի դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհիներից

մեկը նշեց. *«Մեր ընտանիքում ընդունում են կրթությունը, որը մեր ավանդույթների մեջ չի մտնում: Պապիկիս հետ որոշել ենք, որ 12-րդ դասարանն ավարտելուց հետո ընդունվելու եմ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, սակայն Երևանում բարեկամներ չունենք, և բնակարանի խնդիր կա: Ցանկանում եմ հայտնի երգչուհի դառնալ, աշխատել և վաստակածս գումարը տրամադրել իմ համայնքի զարգացմանը»* (ԴԱՆ, գ. Ալագյազ, Լ., աշակերտուհի, 18 տարեկան):

Դ. Աշխատատեղերի հասանելիություն

Հայաստանում զբաղվածության խնդիրը դեռևս այն հիմնական խնդիրներից է, որին բախվում է ՀՀ յուրաքանչյուր աշխատանք փնտրող քաղաքացի: Աշխատատեղերի բացակայությունը մարզային համայնքներում առավել սուր մակարդակի վրա է, որը չի շրջանցել նաև եզդիաբնակ համայնքները: Ֆերիկ համայնքում աշխատատեղերը սահմանափակվում են դպրոցով, գյուղական ադմինիստրատիվ աշխատանքով և անասնաբուծությամբ: Ֆերիկ համայնքում ադմինիստրատիվ և կրթական բոլոր պաշտոնները զբաղեցնում են տղամարդիկ կամ ազգությամբ հայ կանայք: Առհասարակ, եզդիական համայնքներում առկա է եզդիերենի ուսուցիչների պակաս, իսկ նրանք, ովքեր դասավանդում են այն, մեծ մասամբ չունեն համապատասխան կրթություն: Եզդուհիները հիմնականում զբաղվում են տնայնագործությամբ և մեծապես ներգրավված են իրենց ներընտանեկան անասնապահական գործերում՝ կաթնարտադրություն, պանրագործություն և այլն: Այսպիսով, փաստենք, որ եզդի կանանց մասնակցությունը հասարակության տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքին խիստ սահմանափակված է:

Ֆերիկ համայնքի միակ իններորդ դասարանցի ազգությամբ եզդի աշակերտուհին խոստովանեց. *«Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ցանկանում եմ վարսահարդարություն սովորել, բայց չեմ ցանկանում աշխատել Ֆերիկում, քանի որ գյուղում զարգացման համար համապատասխան պայմաններ չկան»* (ԴԱՆ, գ. Ֆերիկ, Ս., աշակերտուհի, 15 տարեկան):

Ինչ վերաբերում է Ալագյազ համայնքին, այստեղ զբաղվածությունը ևս սահմանափակվում է վերոնշյալ ուղղություններով միայն մեկ տարբերությամբ. կանանց մասնակցության մակարդակը՝ համեմատած Ֆերիկի կանանց զբաղվածության, զգալի տարբերվում է: Ալագյազի բնակիչների մի կին հարցազրույցի ժամանակ նշեց. *«Իմ հարսն աշխատում է դպրոցի ճաշարանում՝ ՄԱԿ-ի «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակում, որդիս ուսուցիչ է, իսկ ամուսնուս քույրն աշխատում է դպրոցում որպես հավաքարար»* (ԴԱՆ, գ. Ալագյազ, տնային տնտեսուհի, մոտ 65 տարեկան):

Այսպիսով, պատշաճ ենթակառուցվածքների և ինքնադրսևորման ու մշակութային կյանքի զարգացմանը նպաստող հնարավորությունների բացակայությունը հանգեցնում են նրան, որ եզդի կանայք ավելի ու ավելի քիչ են ներգրավվում համայնքային հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Վաղ ամուսնությունների խնդիրը եզդիական համայնքներում

Հայաստանի եզդիաբնակ համայնքներում լայնորեն տարածված պրակտիկա է շարունակում մնալ աղջիկների վաղ ամուսնությունը, ինչն արձանագրվել է նաև 2016 թվականի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեի զեկույցում[34]:

Աղջիկների վաղ ամուսնության հարցում Հայաստանն ունի մի շարք միջազգային պարտավորություններ: Հայաստանի կողմից վավերացված ամենակարևոր փաստաթղթերից են «Երեխայի իրավունքների կոնվենցիան» (1993 թ.) և «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան» (1993 թ.), որը պետություններին պարտավորեցնում է ապահովել կանանց՝ ամուսնությանը ազատ և լիակատար համաձայնությունը: Ավելին, համաձայն նույն կոնվենցիայի 5-րդ հոդվածի՝ մասնակից պետությունները պարտավոր են ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցառումները՝ փոխելու տղամարդկանց ու կանանց վարքագծի սոցիալական և մշակութային մոդելները՝ նախապաշարմունքների ու սովորույթների և բոլոր այլ պրակտիկաների վերացմանը հասնելու նպատակով, որոնք հիմնված են այս կամ այն սեռի ստորադասության կամ առավելության կամ տղամարդկանց ու կանանց կարծրատիպային դերի գաղափարի վրա: Բացի այդ, Հայաստանը պարտավորություն ունի վերացնելու երեխաների վաղաժամկետ և հարկադիր ամուսնությունը մինչև 2030 թվականը՝ ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների համաձայն:

Համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի՝ «Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական՝ տասնութ տարեկան տարիքի հասնելը»: Դեռևս 2012 թ., երբ օրենքի նախագիծը քննարկման փուլում էր, դժգոհություններ առաջ եկան եզդիական համայնքի որոշ ներկայացուցիչների շրջանում: Հաշվի առնելով այս դժգոհությունները՝ ՀՀ Կառավարությունը որոշեց վերանայել իր որոշումը՝ ավելացնելով այն դրույթը, համաձայն որի՝ անձը կարող է ամուսնանալ նաև 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, իսկ 16 տարեկանում՝ եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է: Չնայած այս զիջմանը՝ պետական մարմիններում չկա որևէ ընթացակարգ, որը թույլ կտար վերահսկել՝ ամուսնությունները պարտադրված են, թե ոչ: Բացի այդ, շատ տարածված են չգրանցված ամուսնությունները, ինչը ավելի է բարդացնում վերահսկողությունը:

2015 թ. ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման իր զեկույցում Հայաստանը համաձայնեց ուսումնասիրել առաջարկությունները օրենքով սահմանված ամուսնության նվազագույն տարիքը պարտադրելու և երեխաներին վաղ ամուսնության բացասական ազդեցության վերաբերյալ իրազեկման ծրագրեր մշակելու վերաբերյալ: Չնայած սրան՝ կառավարությանն առընթեր Ազգային

[34] Committee on the Elimination of Discrimination against Women, Concluding observations on the combined fifth and sixth periodic reports of Armenia, /C/ARM/CO/5-6, 25.11.2016. P. 14

փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնից տեղեկացանք, որ կառավարության կողմից իրազեկման կամ կանխարգելման որևէ ծրագիր նախատեսված չէ:

Եզդիական համայնքում աղջիկների վաղ ամուսնության պրակտիկային և կրթությունից դուրս մնալու իրավիճակի շարունակականությանը, բացի վերը քննարկված գործոններից, ինչպիսիք են կրթության անհասանելիությունը և ենթակառուցվածքների բացակայությունը, նպաստում են նաև գենդերային պատկերացումներն ու նորմերը, սոցիալ-տնտեսական պատճառները, որ կքննարկենք ստորև:

Ա. Ամուսնական մշակույթի տաբուները. խառնամուսնություններ

Եզդիական մշակույթում ավանդաբար ամուսնության հիմնարար սկզբունքներն են արտակրոնական և արտակաստայական ամուսնությունների արգելքները: Այս արգելքները դեռևս մեծ նշանակություն ունեն և խստորեն պահպանվում են շատ եզդիական համայնքներում:

Եզդիական սոցիալական համակարգի համատեքստում, որ հենված է հստակ սահմանված խմբերի՝ կաստաների միջև ինստիտուցիոնալիզացված հարաբերությունների վրա, կաստայական դերի պատշաճ կատարումը համարվում է եզդիական ինքնության կարևոր դրույթներից մեկը[35]: Ինչպես արդեն նշվել է, եզդիական կաստայական համակարգի առանձնահատկություններից մեկը կաստաների էնդոգամությունն է. հոգևոր դասին պատկանող շեյխերի, փիրերի, աշխարհիկների՝ մրիդների միջև ամուսնությունը կրոնական հիմնական տաբուներից է[36]: Դաշտային աշխատանքի ընթացքում կաստաների միջև խառնամուսնությունը կամ սեռական կապը որոշ բանախոսների կողմից որակվում էր իբրև սրբապղծություն կամ մեղք, իսկ հարցազրույցներից մեկում շեյխերի կաստային պատկանող ամուսինները նշեցին, որ արգելքի խախտման դեպքում մարդը դադարում է եզդի լինելուց, և ընդգծելու համար արտակաստայական ամուսնության մշակութային անհնարինությունը՝ այն համեմատեցին մոր կամ քրոջ հետ կենակցելուն:

Այնուամենայնիվ, դիտարկված երկու համայնքներում՝ Արարատի մարզի Ֆերիկ և Արմավիրի մարզի Ալագյազ գյուղերում, ինչպես սոցիալ-տնտեսական, կրթության ոլորտներում, այնպես էլ ամուսնության ինստիտուտի և նշված սկզբունքների վերաբերյալ կային որոշակի տարբերություններ: Օրինակ, եթե Ֆերիկ գյուղում կաստայական բաժանումներն առ այսօր չափազանց կարևոր նշանակություն ունեն ամուսնության ժամանակ, ապա Ալագյազում կատարված որոշ հարցվածների շրջանում այս արգելքը չէր կարևորվում:

Էնդոգամության սկզբունքը գործում է նաև կաստայից դուրս՝ միջխմբային ամուսնությունների դեպքում: Զրուցակիցներից ոմանք արտախմբային ամուսնության արգելքը բացատրում էին ինչպես

[35] Kreyenbroek, Phillip, Khanna Omarkhali, Introduction to the special issue: Yezidism and Yezidi studies in the early 21st century. 2014
[36] Domle. K. , Yazidis: A Deep-Rooted Community in an Unstable Present. In Salloum, S. Minorities, 2013

ազգային ինքնությունը պահելու անհրաժեշտությամբ, այնպես էլ կրոնական արգելքով: Զրուցակիցներից մեկի պնդմամբ քանի որ եզդի կարող է լինել միայն եզդի հորից և մորից ծնված մարդը, եզդիական համայնքից դուրս ամուսնությամբ մարդը դուրս է գալիս համայնքից: Չնայած կրոնական արգելքին՝ ազգային խառնամուսնությունների մասին պատմությունները նույնպես հազվադեպ չեն, սակայն հիշատակված բոլոր դեպքերում այլազգին հարսն էր: Ալագյազ գյուղում, օրինակ, հայ աղջկա հետ ամուսնացած տղայի հայրն ասաց, որ իր աղջկան չէր ամուսնացնի հայի հետ: Նույն ձևով Ֆերիկ գյուղի կանանցից մեկը նշեց, որ *«տղաները հանգիստ ամուսնանում են այլազգիների հետ, բայց եթե աղջիկը ամուսնանա, կատեգորիկ դեմ կլինեն բոլորը, պատերազմ կլինի»* (ԴԱՆ, գ. Ֆերիկ, տնային տնտեսուհի, մոտ 30 տարեկան):

Ամուսնության ինստիտուտում կրկնակի՝ կրոնական և կաստայական էնդոգամիայի սկզբունքը դժվարացնում է Հայաստանում ավելի քան 35 000 բնակչություն ունեցող եզդիական համայնքում ամուսնության համապատասխան թեկնածու գտնելու խնդիրը, որը հատկապես սուր է առավել փոքրաթիվ կաստաների, օրինակ՝ փիրերի դեպքում: Ըստ շեյխ Հասան Թամոյանի՝ նաև այլընտրանքի բացակայության պատճառով եզդիների շրջանում հաճախ է հանդիպում մոտ ազգականների միջև ամուսնությունը: Մյուս կողմից՝ դաշտային աշխատանքի ընթացքում գրանցվել են այլազգիների և այլ կաստայի ներկայացուցիչների հետ ամուսնության դեպքեր, ինչը կարող է պայմանավորված լինել եզդի աղջիկների քանակական սակավության պատճառով կրոնական արգելքների շրջանցմամբ կամ որոշ դեպքերում թույլ արտահայտված կրոնական ինքնությամբ:

Բ. Սեռերի քանակական անհամամասնության խնդիրը

Եզդի աղջիկների վաղ ամուսնությանը նպաստող անուղղակի գործոններից է սեռերի հարաբերակցության անհամամասնությունը՝ պայմանավորված պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությամբ: Հայաստանում անկախության տարիներից ի վեր գրանցվել է նորածինների սեռերի անհամամասնության շարունակական աճ. համաձայն ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի 2012 թ. հունիս – 2013 թ. հունվար ամիսներին կատարված հետազոտության՝ յուրաքանչյուր 100 նորածին աղջկան բաժին է ընկնում 114-115 նորածին տղա, իսկ ազգային փոքրամասնությունների շրջանում արական սեռի նորածինների գերակշռությունն ավելի բարձր մակարդակի վրա է՝ 128 արական սեռի ծնունդ յուրաքանչյուր 100 իգականի հաշվով[37]: Այսպիսով, թեև սեռերի անհամամասնության խնդիրը կա ամբողջ Հայաստանում, այն հատկապես իր ողջ սրությամբ նկատելի է դառնում եզդիական փակ, փոքրաթիվ համայնքում:

Ինչպես արդեն նշել էինք, հանդիսանալով փակ էթնո-դավանաբանական խումբ, եզդիների ամուսնությունը թույլատրվում է միայն խմբի ներսում: Այսպիսով, մի կողմից՝ աղջիկների թվի պակասի, մյուս կողմից՝ կրկնակի էնդոգամիայի սկզբունքի պատճառով հարսնացուի համար

[37] Գիլմոտո Զ. Ք., IRD/CEPED Փարիզ, Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում. Ժողովրդական տվյալներով վերլուծություն, Երևան, 2013, էջ 77

«պայքարը» սկսվում է վաղ տարիքում՝ ամրագրելով հետագա ամուսնությունը ընտանիքների միջև պայմանավորվածություններով, նշանելով կամ աղջիկ փախցնելով:

Գ. ֆիզիկական և հոգեբանական անվտանգությունը. առևանգման վախը

Աղջիկների առևանգման վտանգն ուղղակիորեն ազդում է աղջիկների կյանքի որակի, ինչպես նաև նրանց ընտանիքների որոշումների ու ընտրությունների վրա: Այսպես, առևանգման վախը ստիպում է նախնառաջ վերահսկել աղջիկների տեղաշարժը և ներկայությունը հանրային տարածքում: Աղջիկների ուսումը շարունակելու անկարողությունը ևս մասամբ պայմանավորված է ոչ միայն թերզարգացած ենթակառուցվածքների, այլև այն փաստի հետ, որ ո՛չ ծնողները, ո՛չ էլ նրանց դուստրերը պաշտպանված չեն զգում իրենց: Ինչպես նշվեց, Ֆերիկ համայնքում չկա ավագ դպրոց, ուստի ուսումը շարունակելու համար աշակերտները պետք է հաճախեն հարևան գյուղերի կամ Էջմիածնի դպրոցներ: Աղջիկների համար սա մեծ խնդիր է՝ համայնքում առկա առևանգման վտանգի պրակտիկայի պատճառով, ուստի ծնողների մտավախության պատճառով աղջիկներին թույլ չի տրվում միայնակ գնալ որևէ այլ համայնք: Բարձր դասարանի աղջիկները ոչ միայն չեն կարող ինքնուրույն գյուղից դուրս գալ, այլև անգամ մոտ տարածություններում հաճախ տեղաշարժվում են հարազատների ուղեկցությամբ: Օրինակ՝ Ալագյազ գյուղում հարևան տնից մեզ մոտ հարցազրույցի եկող ութերորդ դասարանի աղջիկը եկավ ու գնաց եղբոր ուղեկցությամբ: Հենց առևանգման վտանգի և միայնակ տեղաշարժվելու սոցիալական արգելքների պատճառով աղջիկները հաճախ չեն կարողանում գյուղից դուրս շարունակել իրենց կրթությունը:

Ալագյազում ֆոկուս-խմբային քննարկումներից մեկի ժամանակ զուգահեռաբար նշվում էր 14-ամյա եզդի մի աղջկա ծննդյան երեկույթը, որին հրավիրված էին նրա բոլոր դասընկերները. բոլորը եկել էին, բացառությամբ մեկ աղջկա, որի հայրն ու եղբայրը, վախենալով աղջկա առևանգումից, թույլ չէին տվել մասնակցել: Այս հարցը շատ արդիական է գյուղում, և այն հարցին, թե ինչպես են աղջիկները դպրոց հաճախում, ոմանք պատասխանեցին, որ եթե տունը դպրոցից հեռու է, նրանց ուղեկցում են եղբայրները կամ ծնողները:

Առևանգման վտանգը հաճախ դրդում է նաև աղջիկների ընտանիքներին նրանց վաղ ամուսնացնել, քանի որ այդպես նրանք պահպանում են աղջկա համար ապագա ընտանիքն ու փեսացուին ընտրելու հնարավորությունը: Այսպես, օրինակ՝ Ալագյազ գյուղից մի կին, որի աղջիկ թոռնիկը Ռուսաստանում ամուսնացել էր 14 տարեկանում, նշեց որ իր աղջկան ամուսնացնելուց բացի այլ տարբերակ չուներ. *«գոնե գիտեինք՝ ում ենք տալիս»* (ԴԱՆ, գ. Ալագյազ, տնային տնտեսուհի, մոտ 55 տարեկան):

Միջին տարիքի մի կին, անդրադառնալով այս թեմային, պատմեց, որ ինքը կիսատ է թողել ուսումը և վաղ ամուսնացել՝ միայնակ հարևան գյուղ չգնալու պատճառով. *«Ես հնարավորություն չեմ ունեցել որևէ մեկի հետ հարակից համայնք մեկնել սովորելու, իսկ ծնողներս էլ ինձ թույլ չեն տվել միայնակ մեկնել: Արդյունքում, դպրոցն ավարտելուց հետո ես անմիջապես ամուսնացել եմ: Ծնողներս*

մտածում էին՝ ի՞նչ կլինի, եթե վատ ընտանիքի մի տղա առևանգի ինձ» (ԴԱՆ, գ. Ալագյազ, տնային տնտեսուհի, մոտ 40 տարեկան)*:*

Էջմիածին քաղաքի ոստիկանության անչափահասների գործերով զբաղվող բաժանմունքում ոստիկաններից մեկը նշեց, որ վաղաժամ ամուսնության խնդիրն արդիական է եզդիական համայնքում: Նշվեց, որ ոստիկանությունը չունի որևէ մեխանիզմ, որը կարող է կիրառել և ստիպել երեխաներին շարունակել ուսումը այն դեպքում, երբ ծնողները դպրոցից հեռացրել են նրանց. *«Գործի վարույթը շարունակվում է, բայց երբեմն դպրոցի տնօրեններն իրենք են պնդում, որ սա եզդիական ավանդույթ է, և մենք պետք է զիջենք»* (ԴԱՆ, ք. Էջմիածին, Ա.Ս., անչափահասների գործերով օպերլիազոր)*:*

Դ. Գենդերային նորմեր և պրակտիկաներ

Աղջիկների վաղ ամուսնություններին նպաստում են գենդերային պատկերացումներն ու նորմերը, ավանդաբար «կանացիության» հետ կապվող առաքինությունն ու արժեքները, որոնց հիման վրա ձևավորվում են առօրյա միջանձնային շփման պրակտիկաները և կին-տղամարդ հարաբերությունները համայնքում:

Եզդիական ընտանիքում «son bias»[38]-ը՝ աղջիկ և տղա երեխաների նկատմամբ տարբերակված վերաբերմունքը, երևում է ոչ միայն սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման վիճակագրությամբ, այլև առօրյա պրակտիկաներում: Այդպես, զրուցակիցներից մեկը, խոսելով ընտանիքում աղջկա դերի մասին, նշեց, որ «աղջիկը հյուր է, իսկ հյուրն աստծունն է» (ԴԱՆ, ք. Երևան, Հ. Թ., մոտ 65 տարեկան): Թեև այս խոսքն ասվեց շեշտելու համար ընտանիքի՝ աղջկա ծնվելով օրհնված լինելը, «հյուրի» կարգավիճակը հստակորեն տարբերվում է տղայի՝ ժառանգորդի կարգավիճակից: Այլ են նաև տարբեր սեռերի երեխաների մեջ գնահատվող առաքինությունները և արժեքները: Ֆոկուս-խմբային և առանձին հարցազրույցներում աղջիկների մասին խոսելիս հիմնական դրական օգտագործվող էպիտետներն էին «*խելոքությունը, հեզությունը, համեստությունը*»: Աղջկա մեջ գնահատվող ամենակարևոր առաքինությունները՝ «*մաքրությունն ու կուսությունը*», ուղղակիորեն կապված են աղջկա ու ընտանիքի պատվի հետ: Այս արժեքները փոխակերպվում են ընդունված նորմերի ու վարքաձևերի. քանի որ աղջիկները պետք է խուսափեն իրավիճակներից, երբ կարող են կասկածներ առաջանալ հարիր պահվածքի վերաբերյալ, սահմանափակվում է աղջիկների տեղաշարժման ազատությունը հանրային տարածքում: Այսպես, ընտանիքի կարևորագույն ֆունկցիան դառնում է աղջկա անվտանգության ապահովումն ու «բարի համբավի» պահպանումը մինչ աղջկա ամուսնանալը, իսկ մյուս, օրինակ՝ կրթական կարիքների ապահովումը կարևորությամբ երկրորդում է դրանց:

[38] Արտացոլում է տղա երեխաների նկատմամբ ընդգծված նախապատվությունը հասարակությունում, ինչը բերում է աղջիկների և կանանց նկատմամբ սուր խտրականության:

Խիստ տարբերվում են նաև տղաների և աղջիկների հասունացման պրակտիկաները: Եթե տղաների դեպքում հասունացումը հիմնականում արտահայտվում է աստիճանաբար անկախանալով, նրանք ունեն այլ քաղաք կամ արտերկիր սովորելու, աշխատելու մեկնելու առավել մեծ հնարավորություններ, ապա աղջիկների դեպքում հիմնականում տեղի է ունենում հակառակը: Այսպես, մանկությունից հասուն տարիք անցումը, որ սովորաբար համապատասխանում է ֆիզիկական հասունացման և նաև սոցիալական կարևոր փուլի՝ հիմնական դպրոցն ավարտելով, արտահայտվում է մեկուսացմամբ: Մի կողմից՝ առևանգման վտանգի և անվտանգության երաշխավորման նպատակով, մյուս կողմից՝ գենդերային դերերի համապատասխանության համար աղջիկների առօրյան մեծ մասամբ սահմանափակվում է տնային տնտեսության զբաղվածությամբ: Զուգահեռաբար 13-14 տարեկանում արդեն աղջիկներին հասանելի են դառնում հասուն կանանց հասանելի ատրիբուտները՝ շպարը, բարձրակրունկ կոշիկները և այլն: Ինչպես պատմում է զրուցակիցներից մեկը՝ *«Մի անգամ մորքուրիս տասնչորս տարեկան աղջիկը, որի հետ մենք նույն տարիքի ենք, եկավ մեզ հյուր՝ քսված, բարձր կոշիկներով: Հարցրի՝ էս ինչ ա, ասեց՝ ինձ արդեն կարելի ա: Բայց երեկ մենք դեռ միասին խաղում էինք տիկնիկներով»* (ԴԱՆ, ք. Երևան, Զ.Ք., 25 տարեկան):

Մեկ այլ կարևոր խնդիր է հակառակ սեռի հետ շփումը: Դաշտային հետազոտությունը ցույց տվեց, որ թեև դպրոցական շրջանում տղաների ու աղջիկների միջև խաղերն ու ընկերությունը նորմալ պրակտիկա են, ապա «մեկուսացման» շրջանից սկսած ավանդական ընտանիքներում աղջիկների և ազգակցական շրջանակից դուրս գտնվող տղաների հետ շփումը խիստ սահմանափակվում է: Այդ պատճառով հակառակ սեռի հետ ծանոթությունները տեղի են ունենում կամ ընտանեկան հավաքների և միջոցառումների, օրինակ՝ հարսանիքների ժամանակ կամ «խնամախոս» բարեկամների և ծանոթների միջոցով: Այս առումով հատուկ դեր ունեն շեյխերի դասին պատկանող անձինք, որոնք, ճանաչելով ու կապ ունենալով իրենց համայնքի անդամների հետ, հաճախ հանդես են գալիս համապատասխան թեկնածու գտնելու միջնորդի դերում: Այսպես, թեև գրեթե բոլոր բանախոսները պնդում էին, որ «*ստիպողաբար ոչ մեկին արդեն չեն ամուսնացնում*», «*աղջիկը որ չուզի՝ չի ամուսնանա*», սակայն ծանոթության և հակառակ սեռի հետ շփման խիստ վերահսկումը հստակորեն սահմանափակում է աղջիկների՝ զուգընկերոջ ազատ ընտրության հնարավորությունը:

Ամփոփում

Այսպիսով, մինչխորհրդային շրջանում եզդի կանանց դերը և սոցիալական հնարավորությունները սահմանափակվում էին պատրիարխալ հասարակարգի և ոչ անվտանգ էթնիկ միջավայրում ապրելու գործոններով: Թեև Խորհրդային Միության քաղաքականությունը նպաստեց եզդի կանանց որոշակի էմանսիպացիային՝ եզդուհիներին հնարավորություն ընձեռվեց տղամարդկանց հետ հավասար կրթություն ստանալու, աշխատելու և մասնակցելու տեղական մշակութային և քաղաքական կյանքին, սոցիալական մոբիլության սահմանափակումները և վաղ ամուսնության պրակտիկաները շարունակեցին կենսունակ մնալ նաև անկախության տարիներին:

Այսօր եզդի աղջիկների հիմնական խնդիրներից է կրթության իրավունքի ոչ լիարժեք իրացումը. լեզվական խոչընդոտի, տրանսպորտային թերզարգացած ենթակառուցվածքների և անվտանգության ապահովման երաշխիքների բացակայության պատճառով հիմնական կրթությունը շարունակելու հնարավորությունները հաճախ անհասանելի են գյուղական համայնքներում բնակվող աղջիկներին: Բացի այդ, գյուղական համայնքներում մանկապարտեզների և աշխատատեղերի բացակայությունը ևս նպաստում է կանանց ֆինանսական և սոցիալական կախվածության շարունակականությանը:

Մյուս կողմից, եզդիական համայնքներում շարունակում է կենսունակ մնալ վաղ ամուսնությունների պրակտիկան, որը մի կողմից՝ պայմանավորված է ամուսնության և գենդերային դերերի մասին մշակութային պատկերացումներով, մյուս կողմից՝ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումներով, կրկնակի էնդոգամիայի (էթնիկ և կաստայական) հետևանքով ամուսնության հնարավոր զուգընկերների խիստ սահմանափակմամբ, ինչպես նաև պետական համապատասխան քաղաքականության բացակայությամբ:

Թեև Հայաստանում կա հստակ արձանագրված խնդիր, որ եզդի աղջիկները խիստ խոցելի են վաղ ամուսնությունների և կրթությունը կիսատ թողնելու տեսանկյունից, պետությունը չունի համապատասխան կանխարգելիչ ծրագրեր: Չկան մշակված մեխանիզմներ և կրթական ծրագրեր՝ եզդուհիների շրջանում իրավագիտակցության բարձրացման համար:

Սոցիալական խնդիրների և կարիքների գնահատումը

- Եզդիական համայնքներում դասարանները համակազմ են, ինչը թույլ չի տալիս, որ տարբեր դասարաններում սովորող երեխաները լիարժեք կրթություն ստանան:

- Նախակրթարանի և մանկապարտեզի բացակայությունը երկու համայնքներում էլ թույլ չի տալիս, որ առաջին դասարան հաճախող երեխաները կարողանան ավելի սահուն ընդգրկվել հայերենով տարվող կրթական պրոցեսի մեջ: Մանկապարտեզի բացակայությունը նաև խոչընդոտ է, որ եզդի/քուրդ կանայք, որոնք հիմնականում ստանձնում են իրենց երեխաների դաստիարակությունը, կարողանան դուրս գալ աշխատանքի:

- Եզդիական/քրդական համայնքների դպրոցներում ուսուցիչների մեծ մասը հայեր են, ինչը ևս խնդրահարույց է կրթական պրոցեսը որակյալ կազմակերպելու առումով: Հայ ուսուցիչները և եզդի/քուրդ աշակերտները միշտ չէ, որ հասկանում են միմյանց: Այս խնդիրը նպաստում է նրան, որ երեխաների մոտ աստիճանաբար վերանում է սովորելու մոտիվացիան: Նաև միևնույն պատճառով հայ ուսուցիչները միշտ չէ, որ շահագրգռված են լիարժեք գիտելիք փոխանցել եզդի/քուրդ աշակերտներին:

- Աշակերտների քչաթիվ լինելը և շատ դասարաններում ընկեր/ընկերուհիներ չունենալը ևս խնդիր է եզդի/քուրդ երեխաների համար: Մի շարք հարցազրույցներից պարզ դարձավ, որ երեխաները հրաժարվում են տարատեսակ խմբակներ հաճախելուց ընկերակից չունենալու պատճառով: Դպրոցահասակ աղջիկները, երիտասարդ կանայք պատմում էին, որ չունեն ընկերներ, այսինքն՝ իրենց սոցիալական միջավայրը սահմանափակվում է բացառապես ընտանեկան-ազգակցական շրջանակով:

- Ֆերիկ համայնքի դպրոցը զգալիորեն տարբերվում էր Ալագյազ համայնքի դպրոցից իր աղքատիկությամբ, սպորտդահլիճի, քիմիայի և ֆիզիկայի լաբորատոր սենյակների և ընդհանուր հարմարանքների բացակայությամբ:

- Ծնողների անհետևողականությունը հաջորդ խնդիրն է, որի պատճառով երեխաները հաճախ չեն ստանում լիարժեք կրթություն:

- Մասնագետ ուսուցիչների բացակայությունը և փոխարենը այլ մասնագետների ներգրավվածությունը կրթական գործընթացում բացասական են ազդում ընդհանուր կրթական որակի վրա:

- Ֆերիկ համայնքում ավագ դպրոցի բացակայությունը մյուս կարևոր խոչընդոտն է, որ երեխաները չեն ստանում լիարժեք կրթություն: Չնայած որ ՀՀ օրենսդրությամբ լիարժեք միջնակարգ կրթությունը պարտադիր է, իրավապահ մարմինները հաճախ աչք են փակում ազգային փոքրամասնություններով բնակեցված համայնքներում կրթական և մի շարք այլ սոցիալական խնդիրների վրա:

- Համայնքներում տրանսպորտը վատ է աշխատում: Ավագ դպրոց ունեցող հարևան գյուղ հասնելու համար երեխաները պետք է օգտվեն միկրոավտոբուսից, որի ժամային գրաֆիկը լիարժեք հարմարեցված չէ երեխաների դպրոց հաճախելու գրաֆիկին:

- Գյուղերում երեխաների զբաղվածությունը սահմանափակվում է դպրոցով և երբեմն ծնողներին դաշտային աշխատանքներում օգնելով: Համայնքներում բացակայում են

արտադասարանական խմբակներ, ինչի պատճառով երեխաների մոտ աստիճանաբար պակասում է հետաքրքրությունը կրթական պրոցեսի նկատմամբ։

- Երկու համայնքներում էլ բացակայում են բուժկետերը, հետևաբար տեղի բնակչությունը, և մասնավորապես կանայք, ստիպված են հաճախել հարևան համայնքների բուժհաստատություններ, որոնք միշտ չէ, որ ֆինանսապես և ֆիզիկապես հասանելի են։
- Աշխատատեղերի բացակայության պատճառով, որը բնորոշ է ոչ միայն եզդի/քրդական համայնքներին, այլև ամբողջ Հայաստանին, թերագնահատվում է ընդհանուր կրթական համակարգը։

- Բացակայում են եզդուհիների շրջանում իրավագիտակցության բարձրացման համար պետական կրթական ծրագրերը, չկան եզդի աղջիկների կրթության իրավունքը երաշխավորող գործուն մեխանիզմներ և աղջիկների առևանգումների դեմ տարվող հստակ քաղաքականություն։

ABSTRACT

Yezidis are the largest national minority in Armenia, who are considered a closed community. As a distinct ethno-religious group, Yezidis in Armenia preserve national identity and faith. However, the situation of the rights of Yezidi girls and women in Armenia is of concern. This study attempts to present the top priority needs of Yezidi girls in Armenia, the extent to which Yezidi girls are vulnerable to early marriages, and their role in the decision-making process regarding their own lives, which may form the basis for further discussions and solutions.

As the desk and field study results show, Yezidi girls and women are vulnerable to deprivation of their rights, particularly of educational, social and cultural rights. As a result of Yezidis' specific social structure, socio-economic situation of regions of Armenia and lack of security, early marriages are extensively practiced, while access to quality education and participation in the decision-making processes are not guaranteed. Although Armenia has obligations to protect the rights of national minorities and eliminate harmful practices, Yezidi girls and women do not fully enjoy their rights, not only because of cultural and social issues, but also because of the omissions of the legal system.

Սեղմագիր

Եզդիները Հայաստանի ամենամեծ ազգային փոքրամասնությունն են, որոնք համարվում են փակ համայնք: Իբրև էթնիկ-կրոնական առանձին խումբ՝ եզդիները Հայաստանում պահպանում են ազգային ինքնությունն ու հավատը: Այնուամենայնիվ, եզդի աղջիկների և կանանց իրավունքների հետ կապված վիճակը Հայաստանում մտահոգիչ է: Սույն հետազոտությամբ փորձ է արվում ներկայացնելու Հայաստանում եզդի աղջիկների առավել գերակա պահանջմունքները, այն, թե որքանով են նրանք խոցելի վաղ ամուսնությունների հանդեպ և նրանց դերը սեփական կյանքին առնչվող որոշումների կայացման ընթացքում. այսպիսի հարցերը կարող են հիմք ծառայել հետագա քննարկումների և լուծումների համար:

Գրասենյակային և դաշտային ուսումնասիրությունների արդյունքների համաձայն՝ եզդի աղջիկներն ու կանայք խոցելի են իրենց իրավունքներից, հատկապես կրթական, սոցիալական և մշակութային իրավունքներից զրկվելու նկատմամբ: Եզդիների յուրահատուկ սոցիալական կառուցվածքի, Հայաստանի տարածաշրջանների սոցիալ-տնտեսական վիճակի և անվտանգության պակասի բերումով վաղ ամուսնությունները լայն տարածում ունեն: Չնայած Հայաստանը պարտավորություններ ունի ազգային փոքրամասնությունների իրավունքները պաշտպանելու և վնասակար երևույթները վերացնելու ուղղությամբ, եզդի աղջիկները լիարժեքորեն չեն օգտվում իրենց իրավունքներից՝ ոչ միայն մշակութային կամ սոցիալական խնդիրների, այլ նաև իրավական համակարգում առկա բացերի պատճառով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Արագածոտնի մարզպետարանի պաշտոնական կայք, http://aragatsotn.mtad.am/about-communities/806
2. Արմավիրի մարզպետարանի պաշտոնական կայք, http://armavir.mtad.am/community-leader-council/261/
3. Բալասանյան Ֆ, Ֆերիկում անվստահություն են հայտնում դպրոցի տնօրենին և ուսուցիչներին, Hetq.am, 06.09.2018, URL: https://hetq.am/hy/article/92776
4. Գիլմոտո Զ. Ք., IRD/CEPED Փարիզ, Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում. Ժողովրդական տվյալներով վերլուծություն, Երևան, 2013
5. ՀՀ վիճակագրական կոմիտե, 2011թ. մարդահամարի արդյունքներ, https://www.armstat.am/file/doc/99478358.pdf
6. Авдоев, Теймураз. *Историко-теософский Аспект Езидизма.* Москва: Эра. 2011
7. Аристова, Т. Ф. "К вопросу о религиозных пережитках в курдских семьях". Архив РА "Риа Таза", фонд 1407, список 27, 1961
8. Байлоз, Светлана. “Курдская женщина вчера и сегодня”. Архив РА "Риа Таза", фонд 1407, список 27, 1970
9. Далалян Т., Идентификационные Процессы Среди Курманджиязычного Населения Армении, Фонд имени Генриха Белля, Тбилиси, 2008, URL: https://ge.boell.org/index.php/en/2008/09/10/identifikacionnye-processy-sredi-kurmandzhiyazychnogo-naseleniya-armenii
10. Езиды // Народы мира: историко-этнографический справочник / Гл. ред. Ю. В. Бромлей. М.: Советская энциклопедия, 1988
11. Заря Востока. N-602, 1924
12. Заря Востока. N-1048, 1926
13. Заявление курдской молодежной организации курдянкам. Архив РА "Риа Таза", фонд 1407, список 27, 1960
14. Иванов М., Политика и общество: судьба советских курдов // Восток (Oriens), 2014, №6. С. 54-64
15. Институт Езидской Истории и Религии. *Социальная структура езидского общества.* https://eziin.org/struktura-ezidskogo-obcshestva
16. Чурсин Г. Ф., Филиппович Л. А. География Закавказья. Тифлис, 1929.
17. Риа Таза. 12 ноября, 1937
18. Риа Таза. 22 апреля. 5 июля. 19 июля, 1932
19. Риа Таза. 5 июля, 1932
20. Риа Таза. 6 января, 1933
21. Чурсин, Г.Ф. География Закавказья. Тифлис, 1929
22. Abrahamian, J., The Yezidi Movement in Armenia, 1992, http://groong.usc.edu/orig/ja-19980702.html

23. Ackermann, A., "A Double Minority: Notes on the Emerging Yezidi Diaspora", In *Diaspora, Identity and Religion: New Directions in Theory and Research*, edited by W. Kokot, K. Tölölyan and C. Alfonso, 156–69. London: Routledge, 2004
24. Advisory Committee on the Framework Convention for the Protection of National Minorities. Fourth Opinion on Armenia. https://rm.coe.int/16806f7f70. Adopted on 26.05.2016
25. Allison, Christine. *The Yezidi Oral Tradition in Iraqi Kurdistan.* Richmond: Curzon Press. 2001
26. Asatryan G., Arakelova V., The Ethnic Minorities of Armenia, 2002
27. Committee on the Elimination of Discrimination against Women, *Concluding observations on the combined fifth and sixth periodic reports of Armenia*, /C/ARM/CO/5-6, 25.11.2016
28. Domle. K. , *Yazidis: A Deep-Rooted Community in an Unstable Present*. In Salloum, S. Minorities, 2013
29. Evoyan L., Manukyan T., Religion as a Factor in Kurdish Identity Discourse in Armenia and Turkey, Religion and Soft Power in the South Caucasus, 2017
30. Forbes, Frederick. *"A Visit to the Sinjár Hills in 1838, with Some Account of the Sect of Yezídís, and of Various Places in the Mesopotamian Desert, between the Rivers Tigris and Khábúr."* Journal of the Royal Geographical Society of London, Vol. 9: 409-430. http://www.jstor.org/stable/1797732, 1839
31. Guest, John S. *Survival Among The Kurds: A History of the Yezidis*. NY: Routledge, 2010
32. Joseph, Isya. *Devil Worship: The Sacred Books and Traditions of The Yezidis*. CreateSpace Independent Publishing Platform, 2016
33. Kreyenbroek, Phillip, Khanna Omarkhali, Introduction to the special issue: Yezidism and Yezidi studies in the early 21st century, 2014
34. Layard, Aysten Henry. *Nineveh and Its Remains: With an Account of a Visit to the Chaldean Christians of Kurdistan, and the Yezidis, or Devil-worshippers; and an Enquiry into the Manners and Arts of the Ancient Assyrians.* London: John Murray, 1849
35. Raoul Wallenberg Institute of Human Rights and Humanitarian Law. The Lund-London Guidelines, 2015
36. United Nations High Commissioner for Refugees, Status Determination and Protection Information Section (DIPS). *The Human Rights Situation of the Yezidi Minority in the Transcaucasus*. https://www.refworld.org/pdfid/485fa2342.pdf 2008, Accessed 15.11.201ئ
37. Serdar, Emerîkê. *Wê şevê…* Yêrêvan: VMV Print, 2013

«ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո պատրաստված այլ հրապարակումներ

- Հարաբերություններ առանց շփումների, 2020, https://epfarmenia.am/hy/document/Relations-without-Interactions
- **Արմենիա 3.0. հասկանալ 20-րդ դարի Հայաստանը (անգլերեն), 2019.** https://epfarmenia.am/hy/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia
- Հայաստանը և տարածաշրջանը, 2019, https://epfarmenia.am/hy/document/Armenia_and_the_Region
- Հրատարակչական գործընթացի ուղեցույց, 2019, https://epfarmenia.am/hy/document/publication-algorithm
- Այժմեական գիտելիք շահերի արդյունավետ պաշտպանության համար. ձեռնարկ, 2019, https://epfarmenia.am/hy/document/Manual-for-CSOs-Bridge4CSOs
- Քննադատական մտածողություն. տրամաբանական սխալներ և հռետորաբանական շեղող կիրառուկներ, 2019, https://epfarmenia.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking
- Համակարգված մտագործունեության մեթոդաբանություն և կրեատիվ խաղեր, 2018, https://epfarmenia.am/hy/document/MSTA-Creative-Game
- Հասարակություն և տեղական ինքնակառավարում. Կազմակերպագործունեական խաղի արդյունքները, 2018, https://epfarmenia.am/hy/document/OAS-Highlights-CELoG-2018
- ԵՀՀ-ն և մշակույթը, գրականությունն ու արվեստը (անգլերեն), 2018, https://epfarmenia.am/document/EPF-Culture-Literature-Art
- Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ, 2017, https://epfarmenia.am/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature

Publications under the 'EPF University' headline

- Relations Without Interactions. (2020) https://epfarmenia.am/document/Relations-without-Interactions
- **Armenia 3.0. Understanding 20th Century Armenia. (2019)** https://epfarmenia.am/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia
- Armenia and The Region (in Armenian). (2019) https://epfarmenia.am/hy/document/Armenia_and_the_Region
- Publishing Guide (in Armenian, with English abstracts). (2019) https://epfarmenia.am/hy/document/publication-algorithm
- Present-day knowledge for effective advocacy (in Armenian, with English abrstracts). (2019) https://epfarmenia.am/hy/document/Manual-for-CSOs-Bridge4CSOs
- Critical Thinking: Logical Fallacies and Misleading Rhetorical Tricks (in Armenian). (2019) https://epfarmenia.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking
- About the Methodology of Systemic Thought Activity (MSTA) and Creative Games. (2018) https://epfarmenia.am/document/MSTA-Creative-Game
- Society and Local Self-Governance. Conclusions and Recommendations from Organizational Activity Seminar. (2018) https://epfarmenia.am/document/OAS-Highlights-CELoG-2018
- Culture, Literature and Art. (2018) https://epfarmenia.am/document/EPF-Culture-Literature-Art

- Manifestations of Tolerance and Intolerance in Armenian Literature (in Armenian, with English abstracts). (2018) https://epfarmenia.am/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature

هەواڵنامەی کتێب

This publication has been prepared with the financial assistance of the Embassy of the Republic of Bulgaria in Armenia. Its contents are the responsibility of the Eurasia Partnership Foundation and do not necessarily represent the views of the Embassy of the Republic of Bulgaria in Armenia.

The research has been conducted within the framework of the Project for Enhancement of Public Participation of Yezidi Girls in Armenia, which aims at developing a deeper understanding of the issues related to the rights of and opportunities for the Yezidi girls residing in Armenia.

Issues Related to the Rights of and Opportunities for Yezidi Girls Residing in Armenia/ Isabel Broyan, Parandzem Paryan, Hayastan Martirosyan, Eviya Hovhannisyan

Editors:
Nikolay Hovhannisyan
Anahit Khachatryan
Azniv Naslyan

Eurasia Partnership Foundation, 2020-33 pages

This publication is a part of the series of manuals published under the "EPF University" heading. This publication is a part of Education, methodology of history, culture and values (EMHCV) direction. The series include texts which belong to four large thematic directions:

- Critical Thinking (CT)
- War and Peace (WP)
- Civil Society (CS)
- Education, methodology of history, culture and values (EMHCV)

©Eurasia Partnership Foundation, 2020